

ՄԱՅԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մեջ:

Օտարադարձակները գիտում են ուղղակի
Тифлис. Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունելով է ամեն լեզուով:

Ցայտարարութիւններէ համար վճարում են
Իւրաքանչիւր թաւին 2 կոպեկ:

«ՄԱՅԻ» խմբագրութիւնը խնդրում է
բաժանորդներէջ շուտով հասցնել իրանց
բաժանորդագրները:

ԲՈՂԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Պաշտօնական զեղծութիւններ: Ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ: Նամակ Մեծ-Ղարաբլիսայից: Նամակ
Երևանից: Նամակ Վանաձորից: Ներքին լուրեր:
ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անգլիա: «Հայրենիք»
քաղաքի յօդուած: Նամակ Թիֆլիսից: Արտաքին
լուրեր: ԽԱՌՆ ԼՈՐԻՆԵՐ: ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ: ՍԻ-
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: ՄԻ-
տերալի անցք:

ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԻ ԶԵՂԾՈՒՄՆԵՐ

Երբ կողմնական քաղաքական մասի կա-
րգաւորական, իշխան Գեղարքունիքի կարգաւոր-
չութեան մեզ, մամուլի ներկայացուցիչներ-
ընդ, նա իր արտասանած ծառի մէջ ասեց
թէ ընդգծել է մամուլի միջոցով վարչու-
թեան պաշտօնական զեղծութիւններէ մերկաց-
մանը, բայց պէտք է որ այդ մերկացումները
մամուլը շատ զգուշութեամբ անի, հիմնի
իր մերկացումները ճիշտ տեղեկութիւններ
վրա:

Մենք միշտ աշխատել ենք այդ եղանակ-
ով վերաբերվել գէպի ամեն տեսակ մեր-

կացութիւնները և այժմ էլ կաշխատենք միշտ
հետեւել իշխանի մեզ տուած խորհրդին:

Եւ ահա «Մալիկ» ներկայ համարում
մենք տպում ենք Մեծ-Ղարաբլիսայից ստա-
ցած նամակը այն տեղի անտառապետ պ.
Կուզմիւրի գործած անիրաւութիւններէ մա-
սին:

Թէև նամակը տպագրութեան մէջ ան-
ստորագիր դուրս եկաւ, բայց մենք պատա-
խանաւ ենք թղթագրութեան մէջ յայտն-
ված իրողութիւններէ համար, քանի որ
համեմատելիք մեր թղթագրից մեզ հա-
ղորդած տեղեկութիւնները մեր ձեռքը հա-
սած պաշտօնական երկու զօլումներէ
մէջ յայտնած իրողութիւններէ հետ: Այդ
զօլումներէն են. մինը Մեծ-Ղարաբլիսայի
հասարակութեան կողմից պ. Նահանգապետին
տուած դանդաղ վաւերացում պատճառով, իսկ
միւսը նոյնպէս մի վաւերացում թուղթ,
որ պարունակում է իր մէջ ձեռնված գիւղա-
ցիներէ յուշումներ:

Հասարակութեան և մեր տեղական մամուլի
ուշադրութիւնն ենք դարցնում մեր ներկայ
համարում տպված Ղարաբլիսայի նամակի
վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵՇ-ՂԱՐԱԲԼԻՍԻՑ

Մայիսի 4-ին

«Մալիկ» 61 համարում Ղարաբլիսի նամակա-
գիրը համառօտ կերպով ծանօթացնելով ընթեր-
ցողին տեղական անտառապետի և հասարակու-
թեան մէջ ծագած հողային վիճարանութեանց
հետ, երբեք չէր, որ այդ թշնամական տաք
վիճարանութիւնը չատ վատ կերպարանք կըս-
տանայ, թէ չուտով օրինաւոր անօրէնութիւն չը
լինի և գրկվածներին բաւականութիւն չը տրվի:
Այդ եղբայրացութիւնը ճշմարտեցաւ: Այժմ հարցը
անքնն ծանրացաւ, որ երկու հակառակորդներ
(անտառապետի և հասարակութեան) մէջ թշնա-
մութիւնը և անկարգութիւնը ծայրայեղութեան
հասաւ: Ահա, թէ ինչպէս. հասարակութիւնը այդ
վիճարանի հողերը իր պապական տեղեկանու-
թիւն համարելով, վարում է, որ սե օրուայ հա-
մար մի կտոր ցամաք հող հասցնել իր բաղնախ-
կերպարանի համար: Բայց անտառապետն էլ
պնդում է որ այդ հողերը հասարակութեան իրա-
ւունքից դուրս են և ինքնապէս ուժ գործ դնե-
լով, իրում է հասարակութեան ձեռքից: Պ. ան-
տառապետ Կուզմիւրի ապրիլի 30-ին կէսօրից յե-
տոյ դուրս գալով դաշտը, ինչպէս հողերը վարող
երկրագործներէ զիջին անպիսին մի կողմի խաղ
խաղաց, որի նմանը ոչ մի տեղ տեսնված էր մինչև

հիմայ: Ղարաբլիսի անտառապետը ապրիլի 30-ին
գնում է դաշտը, գրում է հողեր վարողներէ ա-
նունները և վերադառնում է տուն. նպատակով
լաւ հարում է, վեր է առնում իր հետ իր 11
ղինւորված ծառայողներին, գնում ճանապարհին
մի նեղ կիրճում, փոսի մէջ դարան մտնում: Երբ
դարձնելը երբ երկրորդն էր մին մի վերադառ-
նում են տուն, անտառապետը իր գնաւորված
խմբով բռնում են, լաւ թակում են գիւղացիներին,
երկրագործական գործիչները ձեռքից խլում ու
բաց են թողնում: Երբ մարդին այնքան է թա-
կել, որ մէկին սպալով գիւղ բերին, երկրորդի պա-
րանոցը չուան գցած, կապել են ձիու պոչից ու
քաշ տուել, այնպէս որ գիւղացիները մի կերպով
հաղիւ չուանը կտրել ու մահից ազատել են:
Մէկ ուրիշի վրա ըկօրվելը բռնել է, բայց չէ ար-
ձակել, մէկ քանիսի զիջին սուրը շողողացրել:
Խել է երկրագործներէ 40 հատ չլթայ, 4 կա-
ցին, մի ուրազ, կտրատել է երեք հատ արօր, որ
այսպիսի ժամանակ երկրագործի համար իր կեն-
քից էլ առաւել թանկ է: Այս քաջագործու-
թիւնները պ. անտառապետը առանց ամենեւին
խղճահարկելու գործիչուց յետոյ, վերադառնում
է տուն: Հենց այդ ժամանակ լաց ու կոծը ընկաւ
երկրագործ դասի մէջ: Այնպէս Ղարաբլիս յուզված
էր: Յուսահատված հասարակութիւնը բոլորովին չը
զիջէր ինչ անէ, ուժ ունէր: Ամենքը սպասում են
արդար դատաստանի: Անտառապետը հաշտարար
դատարանում բողոքել է շատ վաղուց այդ հողերի
մասին, բայց դարմանում եմ, թէ էլ ինչ հիման

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՏԻՐԱԽԻ ԱՆՅԳ

Գիւ. Նոր էի դարձել, երբ յանկարծ ականջիս
ձայներ հասան:

—Այ, տարան, տարան:
Վեր թռայ տեղիցս, Ո՛ւր տարան, ո՞վ տարաւ,
հարցրի ես:

—Երեկվայ մշակներին, մշակներին, գոռում էին
քաղաւ երեխաները, նոր անցկացրին, ան, ինչ-
պէս լաց էին լինում նրանց ուղեկցող ընկերնե-
րը: Ախիս, խեղճեր, անտէր զարկներ...

Հասարակ ճաշկերպի և դուրս թռայ անեա-
կիցս: Բալում հանդիպեցայ տան արիւնջիս, որ
ինքն իրան խօսում էր վրդովմած:

—Էս օրէնք է, էս իրաւունք է, ուր է արդա-
ւորութիւնը: Մէկ քահանայ էլ չը գտնվեցաւ, որ
արժանի տեսնէր այդ նահատակ մշակներին
յուզարկաւորութեանը ներկայ գտնվել: Թուրքի
պէս տարան, էլի... անտէրներ, անշարական:
Փշապաւ ժամանակը, կորել է արդարութիւնը...

Ես երկար չը լսեցի նրան, շտապեցի գէպի գե-
րեզմանոցը, որ շատ մօտիկ է իմ բնակարանիցս:
Հասայ խօջիւնքի գերեզմանոցը:

Գեղեցիկ առաւօտ էր, մայիսի փայլուն ա-
ռաւօտ էր... պայծառ արեգակ, թեթեւ հովիտ,
—այս բոլորը մի դարմանալի ճոխութեամբ
ներդաշնակվում էր, միայն չէր ներդաշնակվում
այն ողբերգութեան հետ, որ, ահա, մի քանի րո-
պէից յետոյ պէտք է կատարվէր իմ աչքի առջև:
Զմայլված եղանակի գեղեցկութեանց, ես ինձ ու
ինձ մտածում էի: Ի՞նչ փայլ, որ քահանաները
չեկան խեղճ մշակներին թաղման հանդէսը կառա-
ւելու. նրանց փոխարինում էր ընտելեան գեղեց-
կութիւնը, —կարմիր արեւը, մեղմ քամի, կանաչ
մայրաւ: Ո՞վ գիտէ, դուցէ սրանք ասում էին մը-
շակներին, չեղճ, քաղցած, ծարաւ էիր, օրդ սեխ
ու կարօտութեան մէջ անցրիր, մի խնդրութիւն,
մի ուրախութիւն չուանցար կենդանոյ և աւելի
սպաւոր կերպով եղաւ վերջը էլ, բայց հիմա կը
հանգստանաւ, կը միթաթաթաւ:

Այս երեկայութեան էի ինձ տուած, երբ խօ-
ջիւնքից մի փոքր հեռու գերեզմանոցի մի ան-

կիւնում երեկոյան խմբով մշակներ: Ո՛րքան մեծ
էր դարմանքս, երբ նրանց միջում նկատեցի երեք
քահանաներին: Մօտենալով, նրանց թուում տեսայ
տէր Ղազարոս քահանային: Գա խմբաւ անցքը,
դա եկել, հասել էր յուզարկաւորութեանը: Ինչ-
պէս չէր դա տէր Ղազարոսը: Միւս երկու քա-
հանաներին ամբողջ հանդիպելով ճանապարհի
վրա, արեւնք ու համոզեց հետեւ յուզարկաւոր-
ութեան հանդիպին:

Կենդան մէջ առաջին անգամն էի տեսնում
այսպիսի մի աղետալի և սոսկալի տեսարան, ինչ
որ տեսայ այդ օրը թաղման տեղը:

—Վայ անպէր, վայ, գոռում էր ներկայ գտ-
նված մշակներից մինը, ջրատար, նահատակ ան-
պէր, ինչպէս դնում տուն, ինչ խաբար տանել
հասնէին. Արտուած իմ, այդ ո՞ր մեղքի համար
պատուհեցիր մեզ, ինչ զուլում բերիր մեր գլուխը:
—Երեք անպիսիններն էս կողմը բերէք, իրար
մօտ թաղէք, թող մօտիկ ընին իրար, կանչում
էր զիջին տալով մի այլ մշակ:

Վայեր էին ու դանդաղանք, որ ամեն կողմից
լսվում ու բարձրանում զէպի երկիւրը այդ բողբի,
պատուտորած, արեւից այրված դէմքերով, յուսա-
նաւ մշակների այդ խմբից:

Վերջապէս բաց արին դադարները և մէկ մէկ
սկսեցին, առանց դադարի, իջեցնել դիակները
գերեզմանի մէջ:

Երեկոյան փրատակների տակից հանած այլան-
դակված, արեւաշաղախ երեսներով, անձրեխ տակ
ամբողջ գիշերը մնացած մշակների ուռած ետք
դիակներ...

Սուգը սաստկացաւ: Տէր Ղազարոսը խեղդում
էր արտասուքից և չէր կարողանում կարգաւ:
Մշակները լաց էին լինում, նրանց թուում թիֆ-
լիսեցի կիսուտներն էլ ձայնակցում էին նրանց ի-
րանց լացով:

Ես անկարող եղայ մինչև վերջը մնալ մի
փոքր հեռացայ թաղման տեղից և այնտեղ սպա-
սում էի թաղման վերջանալուն:

Այդ տեսակ մի տիրալի անցք ակամայ զար-
թեցնում է ամեն տեսակ մտածութեանը մարդու
մէջ, ով ուզում է լինի նա. հաստատիր վաճառա-
կան, ազգասէր չցիլինդրաւոր ինտելիգենտ, կամ
թէ շարեւերան: Հայ կրեւորակն: Այս տեսակ
դէպքում ոչ ոք չէր կարող չը գիշարածվել:

պէս լաց լինել: Ես աշխատեցի նրանց քաջակե-
րել: «Է՛հ, աղա ջան, ինչ անեք, բալբայ մեզ
համար էլ մի օր երկիւրը լոյս անի» արտասանեց
յուսով լի ողորմականից միւր:

Ես խորհուրդ կը տայի Փրանսիական մեղօղբա-
նէր սիրող մեր թիֆլիսեցի պարոններին և տի-
կիւններին երեկոյան այցելել մեր քաղաքի մշակնե-
րի բնակարանները: Այդտեղ տեսարանները աւելի
սարսափելի են և մի և նոյն ժամանակ աւելի
բնական են, քան թէ հայոց «մշակական խմբից»
ներկայացվող կոմաներով և իշխաններով լի բօնա-
տիական Փրանսիական պիէսներում: Դերկա-
յացումն էլ անվարձ կը տրվի:

Բայց դառնանք մեր հարցին:
Թաղման վերջանալուց յետոյ, ես հաւաքեցի հե-
տեւալ տեղեկութիւնները:

Սպանված եօթ մշակները կենում էին Ղարա-
խանայի կողմը գտնված մի խարխուլ շինութեան
մէջ, որ պատկանում է Դիտիկին: Երեսները
այնքան խարխուլ էր որ գիշերը փուլ եկաւ և իր
փրատակների տակ թաղեց ընած մշակներին: Դո-
ղովորը հանեց աւերակների տակից դիակները:
Տարան Ս. Գեորգ եկեղեցին, որ Մայրաքանի վրա է
գտնվում: Բայց եկեղեցու հայ հողերակալութիւ-
նը հրաժարվեց թաղել գոհներին, որովհետեւ յոյս
չուէր փող ստանալ թաղման կարգը կատարելու
համար: Ննջեցեալներին եկեղեցի էլ չը մտցրին,
մի անեակի մէջ էլ, մի որ և է ամբարի մէջ էլ
չը զրին դիակները, այլ թողեցին եկեղեցու բա-
կում, բայց օրում: Ամբողջ գիշերը անձրեւ եկաւ,
դիակները ջրով լցվեցան և ուռան:

Միւս օրը ամբողջ տարաւ ննջեցեալներին թա-
ղելու խօջիւնքի գերեզմանոցը, առանց քահա-
նայի: ճանապարհին հանդիպեցին երկու քահա-
նաներ, որոնց ժողովուրդը համոզեց իր հետ գը-
նալ: Անցքի մասին տեղեկանալով, եկաւ, հասաւ
գերեզմանատուն և տէր Ղազարոս քահանայ:

Ահա, թէ ինչ թող կերպով նկարագրված, այս օ-
րերս պատահած ողբերգութեան ամբողջ պատ-
մութիւնը, որի հերոսներն են մի կողմից խաբ-
խուլ շինութեան, անխիղճ տէրը, միւս կողմից խաբ-
անիրտ հողերակալները, իսկ գոհը՝ հայ գիւղա-
ցին, հայ մշակն է:

Յ. Սաղաթէլեան

վրա, դատաստանը, օրէնքը թողած, իր սեփական ուժով ուղում է ամեն բան վերջացնել: Եթէ նա գիտէ թէ ունի օրէնք և արդար դատաւոր, որ վաղ թէ ուշ մեղաւորը կը պատժի և զրկվածը իր բաւականութիւնը կը ստանայ, ուրեմն էլ ինչու բռնի միջոցներ է դործ դնում: Եթէ հասարակութիւնն էլ օրէնքին նշանակութիւնն չը տայ, դուրս գալ իրաւունքի սահմանից, այդպէս հազար անհարգութիւններ կարող են պատահել: Հարկաւոր է աղտուել ժողովուրդը այդպիսի լարված դրութիւնից: Այս անկարգութեանց առաջն առնելու համար պէտք է լինի մի երրորդ անձն և ցոյց տալ իճեականապէս թէ, սա հասարակութեանն է, սա էլ անտառապետինն է: Այնուհետև օվ դուրս եկաւ իր սահմանից, թող օրէնքի առաջ պատժվի:—Այս բոլորից յետոյ անհրաժեշտ է այս էլ ասել, որ այսուհետև այդ անտառապետի այստեղ մնալը բոլորովին աննպատակ է և անսակար է հասարակութեան համար: Անկարելի է յուսալ, որ այսուհետև անտառապետի և հասարակութեան մէջ կարող է բարեկամութիւն և ներդաշնակութիւն լինել: Ուրեմն հասարակութիւնը, որի գլխաւոր պարագայունքը համարեալ փայտավաճառութիւնն է, հաղարարը ներդրութիւնները պիտի հանդիպի և հազար ու մի տեսակ ցաւեր պիտի կրէ, ինչպէս և կրում է ամէն րօպէ:

Վերջացնելով նամակս չեմ կարող չը դառն մեր հասարակութեան մէջ գտնված մասնիշխերի վրա, որոնք առանց ամաչելու դատաւանում են մի ամբողջ հասարակութիւն: Այդ ցածանոցի սողունները, խարդախ աղուէնները իրանց եղբայրներին մատնում են և ուրիշներին ձեռքը դնելով հասարակութեան դէմ են հանում: Ամէթ և նախաժողովը այնպիսի մարդուն, որ իր մի կողմէի համար ամբողջ հասարակութեան շահերը ոտնատակ է տալիս: Ի վերջոյ մեծ յոյս ունենք, որ այս նամակը կարտատպէ «Кавказ» ռուս րատիւնը:

ՆԱՍՏԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 3-ին

Մայիսի 1-ը երեսնամեակի քառանկերի բերանը բացարեց: Այդ օր այդպիսով տասնամար խումբեր փողերը հարկաւորելով էին ծախում: Ուրախութեամբ բարեւում էին մայիսի դարը: Մեր միւս հասարակութեանը ևս, ինչպէս թիֆլիս, Բազու, Գանձալ, Ալեքսանդրապոլ, Եւէլի և այլն, չը կարծեմ յետ մնան Երեսնեցի այդ բանում: Այժմ տեսէք թէ այդ օրը, մայիսի մէկին, ինչքան փող ծախսած կը լինի մեր կողմացի հայը իր դրպանից: Անցաւ այդ օրը, հաւաք մայիսի 3-ը: Եկէք դուք այժմ և այն միւս օրվայ անխնայ փող միտողներին առաջարկեցէք բարեգործական նպատակով մի քանի կողմէի նուիրել, նկարագրէք և Պօլի պատրիարքարանի զանաքանիք, մի քանի ընկերութիւնների օրհանգստական դրութիւնը, պատմեցէք Տաճկահայոց փիճակը, ինչորեքէք նուցանից բաժանորդագրվել «Ժողովուրդի օրհանգստական» և այլն: Եթէ պէտք է պահպանենք մեր հայոց լրագրիները, մեր ուսումնարանները... Այդ բոլորին, մի չնային մասի բացառութեամբ, կը պատասխանեն. «մենք ինչորեք աղքատ ենք, չենք կարող օգնել»: Իսկ եթէ հարցը վերաբերվում է փողին, — նորա առատ են: Նոցա բերանից միշտ կը լսէք, «Ինչու ուրիշներին օգնենք, ինչ լինում է թող լինի, միայն «մեր» շահերը պաշտպանվին»: Նոցա կարծիքով իրանց անձնական շահերից դուրս ամէն բան աննպատակ է: Կորա չեն մտածում, որ աղղի վրա ևս հարկաւոր է «մայիս» բերել, հարկաւոր է աղղի դրութիւնը բարւոքել:

Մասնաւոր անհատները գործով ոչինչ չենք կարող անել, այլ մենք կարող ենք պահպանել մեր արդէն գոյութիւն ունեցող ընկերութիւնները, մեր արդէն եղած գործողներին: Եւ այդ ինչպէս կարելի է, եթէ ոչ փողով: Մենք աշխատենք ցոյց տալ, որ հայերն էլ ընդունակ են հասարակական կեանքին: Ուրեմն մենք փոխանակ մայիսի մէկը տօնալու և ուրախանալու, թող նուիրենք այն օրվայ միտած փողը մի աղքատ գործի: Ուրախութիւնը թող լինի, ևս դուրան հակառակ չեմ, միայն մենք, ինչպէս որ առատ ենք դէպի մեր փողը, այնպէս և առատ լինենք դէպի աղղի նուիրատուութիւններով, որով միայն կարելի է պահպանել հայոց համար աշխատողներին:

Շտապում եմ հաղորդել մի ուրախալի լուր: Տեղիս արհեստաւորները (կոշիկաւորները և դեր-

ձակները) կազմել են մի ընկերութիւն, որի նպատակն է հաւաքելով շաքարական փող (անհատական վճար) կազմել մի դրամագլուխ, և դուրս տուրք կամ նուիրել բարեգործական ընկերութիւններին, կամ նրանով պահպանել որը և արքայաւորին, արքայաւորին ընտանիքները: Երբ արհեստաւորը, աղքատ արհեստաւորը հասկանում է այդպիսի ընկերութիւնների անհրաժեշտութիւնը, ինչ են անում մեր վաճառականները, հարուստ վաճառականները: Լաւ չէր լինի արդեօք, եթէ նորա ևս ձեռնամուխ լինէին կազմելու մի այդպիսի ընկերութիւն: Յանկալի կը լինէր որ մեր միւս հասարակ քաղաքներն էլ ունենային այդպիսի ընկերութիւններ:

Վերջապէս տեղիս գիմնադրայի հայ աշակերտների տրուածը, որ չեն ուղում ունենալ հայոց լեզուի մի այնպիսի ուսուցիչ, որը հայերէն թէ և ամենին չը դիտէ, քայքայ որ, այնու ամենայնիւ, դասեր է տալիս, արձագանք դառն տեղիս քաղաքագլուխ պ. Յովհաննէս Ղորղանեանը յանձն առաւ ձրի հայոց լեզուի դասեր տալ գիմնադրայի չորրորդ և հինգերորդ դասարաններում: Աշակերտները պարտնի դասաւարտութիւնից շատ դուր են: Պատի ընդունակութիւնը ուսուցչութեան մէջ յայտնի է նորա քան տարուց աւելի նոյն գիմնադրայում դասեր աւանդելուց:

ՆԱՍՏԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մայիսի 3-ին

Երէկ, ամսոյս 2-ին, յօգուտ մեր քաղաքի երկուս դպրոցի, պ. Լազարեանի կարգաց տղայոց դպրոցի զանգեմում մի դասախօսութիւն, որի նիւթն էր հնագիտական նկարագրութիւն Արի քաղաքի: Պարոնը իր դասախօսութեան նիւթը քաղել էր զլուստրապէս 5. Արիանի «Շիրակ» գրքից և քաղաքաւ «Փորձ» ամսագրի մէջ տրուած «Անալիտիկ միջնէ Արի» նկարագրութիւնից:

Այս դասախօսութեան համար նկարել էր իշխան Մ. Բեհնաթեանը 5. Արիանի վերադիտել գրքից մեծ դիւրով Արիի պլանը, նորա կաթողիկէ մայր եկեղեցին, այս վերջինի պլանը և խորանի երկու կամարները, բացի այդ Հայաստանի աշխարհագրական քարտէզը շատ մեծ դիւրով: Այդ նկարները վրա դասախօսը ցոյց էր տալիս դասախօսութեան մէջ յիշած տեղերը: Չը նայելով վատ եղանակով, հասարակութիւնը շատ էր:

Հէնց նոյն երեկոյ, ընդամենը ժամանակ, յօգուտ նոյն դպրոցի վիճակաբաղ հանգչին ձեռքով գործած Հայաստանի աշխարհագրական քարտէզը, մէկ գեղեցիկ շրջանակի մէջ դրած, որ գործել էին Նատալիա և Սօփիա Ղուկասեան օրիւորները, իշխանի օգնութեամբ:

Դասախօսութեան վերջանալուց յետոյ, իշխանը մի քանի խօսքով բացատրեց հասարակութեանը մեր երկուս դպրոցի վատ դրութիւնը, մի և նոյն ժամանակ յոյս յայտնելով, որ հասարակութիւնը վերջապէս կը հասկանայ իր պարտականութիւնը — օգնել նիւթապէս խեղճ դպրոցին:

Իշխանը և ուսուցիչը իրանց միասնապէս աշխատութիւնը չը խնայեցին նուիրել մեր աղքատիկ երկուս դպրոցին:

ՆԱՍՏԱԿ ԼՈՒՐԻՐ

Վահան Վահանեանը, որ նորերումս վաթսհանվել է թիֆլիսում և որ նուիրել է 700 բոլոր յօգուտ Տրապիզոնի հայոց դպրոցի, բացի այդ նուիրել, ինչպէս մեզ հաղորդում են, թողել է 100 բոլոր էլ թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան օգտին:

Հինգաթիւ մայիսի 6-ին Համարձման տօն լինելով, սպարանում չէին բանում և այդ պատճառով մենք չը կարողացանք դուրս բերել «Մշակ» երկվայ համարը:

Թիֆլիսի վաճառական պ. Գեորգ Գեորգեան յայտնում է միկ հետեւեալը: «Ես և եղբայրս, որ թեկեղաթիւում է, ցանկանում ենք երեք շարքի շարունակ պահել մեր հաշուի երկու քաղաքային ուսուցչներին մեր տանը, ուսուցչական ժողովի ժամանակ»:

Թիֆլիսի հայունեաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի խնդրելու մեծ-

արգոյ տիկիններին և օրիորդներին չնորս բերել առաջինայ կերակրի մայիսի 9-ին, առաւօտեան 11 ժամին Ս. Գայեանեան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանը, ուր լինելու է Ընկերութեան ընդհանուր ժողովը: Ժողովի պարագմանց նիւթը կը լինի. վարչութեան համառօտ տեղեկագիրը իր երկամեայ դործունեութեան մասին և վարչութեան փոխանդանների (կանդիդատների) ընտրութիւնը:

Մեզ հաղորդում են, որ մայիսի 3-ին պէտք է դուրս եկած լինէր «Աշխատանք» շաբաթաթիւերի առաջին համարը: Շաբաթաթիւերը պէտք է ծախվի Շահվերդեանի և Պետրովի գործակալութիւնների մէջ, Շահադիդեանի գրադարանում, Կուշ-Նարեկի ծխախոտի մաղաղխում և ուրիշ տեղերում: Համարի գինը 5 կօպէկ է:

Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում «Մշակի» ներկայ համարի Բանասիրական բաժնի մէջ տրված «Մի տխրալի անցք» վերնագրով յօդուածի վրա: Յոյս ունենք մեր լրագրի հետեւալ համարներից մինի մէջ նուիրել մեր մշակների դրութեան հարցին մի առաջնորդող յօդուած:

Երկուշաբթի, մայիսի 10-ին հայ դերասանական մշտական խումբը Արծրունու թատրոնում ի նպաստ պ. Օրդուբաթեանի կը ներկայացնէ «Ընտանեկան դադնիք», կոմ. երեք արարուածներով: Երբ պ. Օրդուբաթեան առաջին անգամ բնավ դուրս եկաւ մշտական խմբի հետ, մենք առեցինք, որ նա ժամանակով կարող է դարձաւոր ոչ թէ մեր, այլ և աւելի դարձաւոր բնույթ: Պ. Օրդուբաթեանը արդարացից մեր կարծեք. մի քանի ներկայացումներից յետոյ նա մեր խմբի մէջ առաջնակարգ դերք բռնեց: Մենք յուսով ենք, որ մեր հասարակութիւնը իր ներկայութեամբ կը խրախուսէ տաղանդաւոր ու համակերի երիտասարդ պ. Օրդուբաթեանին: Հարկաւոր ենք համարում աւելացնելու և այն, որ մայիսի 10—20 ներկայացումը տրվում է պ. Օրդուբաթեանի օգտին ոչ թէ միայն իբրի դերասանի, այլ և իբրի ուսանողի, որ գնում է Բուսառատան, ուսումը շարունակելու համար: Տոմարների կարելի է ստանալ Արծրունու թատրոնի կասապում:

Մեզ խնդրում են յայտնել որ պ. պ. Յարոյի և Նրիգեանի դասախօսութիւնները, որոնք պէտք է կայանալին այսօր, շաբաթ օր, մայիսի 8-ին, յետաձգվում են: Մենք կը յայտնենք հետեւալ համարում թէ երբ կը լինեն այդ դասախօսութիւնները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍ

Իրանդիայի մէջ սարսափելի յանցանք է գործված, գրում է «Русск. Вѣд.» լրագրի: Ֆորստերի տեղ իրանդական գործերի մինիստր նշանակված Կովենդիլ և նրա օգնական Բօրկ սպանված են: Այդ յանցանքը կատարվեցաւ հէնց այն ժամանակ, երբ անդիական մինիստրութիւնը վճռեց իրանդիայի մէջ ընդարձակ վերանորոգութիւններ մտցնել և նրա բնակիչներին զինվածներ անել: Հասկանալի է ուրեմն, որ թէ անդիական և թէ այլ երկիրների յետադիմական և պահպանողական լրագրիները շտապում են օգուտ քաղել Կովենդիլի սպանութեան ապացուցանելու համար, թէ որքան փառաբաւոր և կորստաբեր է այն ճանապարհը, որ ընտրել է Կադատոնի մինիստրութիւնը: Օրինակ «Моск. Вѣд.» լրագիրը յայտնում է, որ Կադատոն գուրկ է կառավարչական ընդունակութիւններից և որ իբրեւ առաջին մինիստր նա անդոյն անձնաւորութիւն է: Ոչ թէ նա է առաջնորդում ուրիշներին, այլ ուրիշները նրան խաբում են և նրանից շինում են այն, ինչ որ իրանդ ուզում են: Նոյն իսկ Անգլիայի մէջ «Times» քաղաքում է խիստ միջոցներին անհրաժեշտութիւնը իրանդիայի մէջ կատարվող սպանութիւններին վերջ դնելու հա-

մար: Վերջապէս ընդհանուր տպաւորութիւնը սաստկանում է և նրանով, որ Կովենդիլ մարիդ Հարտինգտօնի եղբայր է, իսկ Հարտինգտօն մինիստրութեան մէջ թէպէտ չափաւոր ազատամիտների ներկայացուցիչ է, բայց այնու ամենայնիւ ընդունեց կառավարութեան իրանդական նոր քաղաքականութիւնը:

Լօրդ Կովենդիլի սպանման նման քաղաքական սպանութիւնների կորստաբեր հետեւեան այն է լինում, որ հասարակութեանը սարսափ է տիրում: Այդպիսի ժամանակներում հասարակութիւնը անընդունակ է լինում հետազօտել գործի հանգամանքները և շատ անգամ այնպիսի պատճառներ է բերում, որոնք միայն պատահմունք են կազմում:

Այս անգամ էլ անգլիական պահպանողականները և մասամբ չափաւոր ազատամիտները հետեւալ կերպով են դատում: Կառավարութիւնը սկսեց զինվածներ անել, բայց անբաւականները կառավարութեան խաղաղասէր քաղաքականութիւնը յանդուգն սպանութեամբ պատասխանեցին: Ուրեմն, զինդական քաղաքականութիւնը վնասակար է, ուրեմն անհրաժեշտ է ամենախիստ միջոցներ դործադրել:

Բայց եթէ ստանութեամբ քննենք կատարված տխուր անցքը, կը տեսնենք, որ այդպիսի դատողութիւնները դուրի են լօզիկայից: Կովենդիլի սպանութիւնը իրանդիայի մէջ կատարված առաջին սպանութիւնն է: Այդ երկրի մէջ այդպիսի յանցանքները վարուց սովորական երեւոյթներ են դարձել: Այդ բաւական չէ, Կիլոնին և Պարսիկին կալանաւորելը ոչ թէ միայն չը փորձարեց յանցանքների թիւը, այլ ընդմիջ կառավարել դժուարացրեց կառավարութեան համար յանցաւորների ձեռքաւարելը, որովհետեւ Պարսիկի բազմաթիւ կուսակիցները, Ֆորստերից և Կիլոնիայից անբաւական, շատ անգամ անդր էին դարձնում այն բոլոր միջոցները, որոնց կառավարութիւնը գործադրում էր յանցաւորներին կալանաւորելու համար: Կառավարութիւնը ընդդիմադրելով կալուածական յանցանքներին պաշտպանված չէր իրանդական ազգաբնակիչներից: Կեովենդիլ, Պարսիկին և Կիլոնին բանալից արձակելը և Ֆերմերների առաւելիների ներման մասին խոստումը պէտք է հասցնէին կառավարութեանը այդ պաշտպանութիւնը: Եւ ձգնարիտ Կեովենդիլ, Պարսիկին և Կիլոնի հրապարակած շրջաբերականը ապացուցանում է, որ նրանք պատրաստ են պաշտպանել մինիստրութեանը և օգնել, որ յանցաւորները բռնվեն: Այդ շրջաբերականը ապացուցանում է, թէ որքան նպատակայարմար վարվեցաւ կառավարութիւնը զինվածներ խոստանալով իրանդացիներին: Գուցէ Կովենդիլի սպանութիւնն էլ կատարված է այն նպատակով, որ կառավարութեանը արդեւ դնվի հանգստացնել իրանդական ժողովրդը: Գուցէ այդ սպանութիւնը կատարել են այն մարդիկ, որոնց նշանաբանն է որքան վատ, այնքան լաւ: Այդպիսի մարդիկեանց համար ի հարկէ հարկաւոր է ընդարձակել անկարգութիւնները և նրանք կուրախանան, երբ կառավարութիւնը և պարլամենտը ամենախիստ միջոցներ գործ կը դնեն իրանդիայի մէջ, յուսալով, որ այդպիսի միջոցները երկրի մէջ շփոթ կը բարձրացնեն: Պատմութիւնը երևում է, որ յետադիմականները և անհաշտները շատ անգամ միմեանց ձեռք են տուել և աշխատել են որքան կարելի է սաստկացնել անկարգութիւնները և դժուարացնել հաշտութեան գործը: Եթէ անհաշտ ֆենիսները

կատարեցին Կալինիդի տպարանները և այն նպատակով, որ խանութներն և կառավարութեան խաղաղասեր նպատակները և միջին նրան յետադիմական ճանապարհի վրա, ուրեմն կառավարութիւնն էլ պէտք է անգոր դարձնէ ֆեոդալները դործը և շարունակէ իր խաղաղասեր քաղաքականութիւնը: Այդպիսի քաղաքականութեանը ընդդէմ չի լինի եռանդոտ միջոցների գործադրելը գտնելու և պատժելու համար իրանդիային ամօթ բերող յանցանք գործողներին: Պահպանողական «Standart» և «Morning Post» լրագիրները աշխատում են իրանդիայի մէջ կատարված կառավարական յանցանքների ամբողջ մեղադրութիւնը բարդել կառավարական միութեան և նրա առաջնորդների վրա: Ճշմարիտ է, կառավարական միութեանը մեղադրել է, որ նա չընդգրկեց իրանդիայի մէջ կատարված կառավարական յանցանքներին, որ նա աշխատում էր անգոր դարձնել 1881 թուականի կառավարական օրէնքի բարեբեր հետեւները և շատ անգամ պաշտպանում էր պահպանողականներին, բայց աւելի էլ մեղադր են անցկիական պահպանողականները և իրանդիական կառավարականները, որոնց գործողութիւնները աւելի ոյժ տուին անհաշտ կուսակցութեանը և իրանդիական հասցրին այժմեան անխելամուժեանք:

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԼՐԱԳԻՐԻ ԹՅՈՒՈՒՄԸ

Մեր Պատրիարք ինն առաքիներ հիմն բռնելով մի ծրագիր ներկայացուց Կրան և հրաժարեցաւ: Այս ծրագիրը բնական էր որ դիւանագիտական պայքար մը պիտի յաւրուցանէր, որուն մէջ հանձնարը պիտի յաղթանակէ: Մեզ նման տկար ազգի մը համար որչափ ալ մեծ քաջութիւն համարուի մեր խնդիրն պետական կանոնէ գործին վերայ դնել, սակայն բուն իմաստութիւնն այդ խնդիրը լուծելու ճարտարութեան մէջ կը կայանայ: Ունի՞ր արդեօք դիւանագիտական այդ ճարտարութիւնը, ահա մեզ օրինակ Վարչութիւնը: Հինգ խոշոր ամիսներ անցան, և դեռ Սոյ խնդիրը չը լուծուեցաւ: և եթէ դեռ այսպէս ուրիշ հինգ խոշոր ամիսներ ալ անցնին, Սոյ խնդիրը լուծուելիք չունի: Եւ արդէն մեզ ի՞նչ փայլ Սոյ խնդրոյն համար սպասել, ազգին համար Սոյ խնդիրն լինեցած է, այսօր համաբնական ժողով մը կէս ժամուան մէջ պաշտօնական կրնէ Միւրախ կաթողիկոսն, ինչպէս ըրաւ իւր նախորդը: Սոյ խնդիրը քննողը Բ. Գուռն է, տեսնելու համար թէ Սոյ կաթողիկոսութիւն Հայոց Պատրիարքին իրաւասութեան ներքե գտնուիլը իւր շահուց հակառակ զոյն կը պարունակէ՞, ինչպէս նկարագրած կամ հասկցուցած կը թուի Միւրախ կաթողիկոսն: Կրան իրաւունքն է այդ, որոյ օրինակութիւն ամեն կասկածէ վեր կը դաւանենք, բայց երեսօնեան վարչակաւութեան անգոր ձեռքին մէջ այդ խնդիր Կրան խնդիր լինելէ աւելի ազգային խնդիր եղաւ: Եւ վարչութեան կամ ազգային դիւանագիտութեան բոլոր ոյժն ու գործունէութիւն պարապ տեղն հինգ ամիսներէ ի վեր կը սպասուի ահա: Պէտք է մենք առանց Սոյ խնդրոյն լուծման սպասելու գումարներ երեսօնականութիւն և երեսօնեան վարչութեան անկարողութեան հաշիւը մաքրելով Պատրիարքական խնդիրը լուծենք: Պատրիարքական անխելամուժեան պատճառը Սոյ խնդրոյն հետ կապելն, պատրիարքական դաւերու նոր ասպարէզ կամ աղէտներ պատրաստել է, և այսպէս մեր ազգային քաղաքական երջանկութեամբ

երկու մեծ և վատահելի հեղինակութիւններն և յոյսեր ջնջել է: Հասկանալու համար թէ երեսօնեան վարչութիւն որչափ կը սիրէ մեր Պատրիարքը, հինգ ամիսներէ ի վեր մի ամական հաղիւ վճարած է: Մարդ իւր հիւանդ սպասաւորին ամականն իսկ կը վճարէ, և Ներսէս Պատրիարք սպասաւորէ մը աւելի անարժէք էր, քանի որ ազգն ու Գուռն իւր հրաժարականը չեն ընդունիր: Ի՞նչ երախտագէտ պաշտօնեութիւն, պատրիարքն առանց ամականի պահելու, և Պատրիարքարանի ամենէն աւելի արժանաւոր և կարող պաշտօնեային լուծմանը մը կարօտելու չափ նեղել: Եւ միթէ Պատրիարքական անխելամուժեան պատճառն էրեսօնեան վարչութեան նուազ Ներսէս Պատրիարքի համակիր լինելու ապացոյց չէր: Զատիկ պաշտօնական ընդունելութեան առթիւ Պատրիարքին սա խօսքը թէ «նորհալ կամ երեսօնեան էջէն» տի, այս ինչպէս եղաւ որ վերջապէս իրաւուն հետ կըցանք տեսնուիլ: «աչքէ հեռու, սրտէն ալ հեռու լինելու նշան մը կրնայ լինիլ: Ահա երեսօնեան վարչութեան դիւանագիտութեան փայլուն արդիւնք, որոյ նպատակն է ուշացնել դեռ երեսօնականութեան գումարումը, մինչև որ գորաւոր հակապատրիարքեան մեծամասնութիւն մը կազմել կարողանայ Ներսէս սրբազանի դէմ: և իւր դիւանագիտական ձախող ընթացիկ համարն նոր պատրիարքական շփոթ խնդրոց առթիւ նոր անխելաշարութեան կամ մոռացութեան տրուի: Ազգային խնդրոց և անխելամուժեան վիճակին պատճառն է թէ Կրան հակազգային ազդեցութեան կը վերադրենք մենք, այլ երեսօնեան վարչութեան անկարող և հակապատրիարքեան դիւանագիտութեան: Գուռն մեզ թշնամի չէ, իւր իրաւունքն է իւր շահեր պաշտպանել ու աշխրջութիւն գործածել, ինչպէս մեր ալ պարտքն է ազգային շահեր պաշտպանելու իմաստութիւն ունենալ: Երբ այսչափ սիրելի և բարեբար Պատրիարք մը անգամ առանց ստակի, որ ըսել է առանց հացի, պահող երեսօնեան երախտագէտ վարչութիւն մը ունիմք, տարախոյս չը կայ թէ ազգին փափաքանաց համապատասխանող դիւանագիտական ուղիղ գործունէութիւն սպասել անկ է, կոյր աչքէն արցունք, և ծուռ կարկինէն շիտակ դիժ սպասել է: Եթէ երեսօնեան վարչութիւն ունի իւր ծափահարներ, էր համար կը մնան: Պատիւ ունինք յայտարարել նաեւ թէ մեր կարծիքներ բարձրագոյն և ստոյգ աղբիւրներ կը քաղենք և կարծիք յայտնած լինելու կամ տաղանդ փայլեցնելու ամեն փառասիրութեան զերծ ենք: Եւ ընթերցողք այսուհետեւ եթէ կուզեն ազգային դիւանագիտութեան արդի յոյսի արարքներու և Բ. Կրան ազգային բարի կամեցողութեան վրայ ստոյգ գաղափար ունենալ, կարգաւոր են շարունակ «Հայրենիք»: Մեր բարեկամներէն ումիւր վարչութեան յոյս արարքներ ոչ վարչադպրոց նկարագրելէ դադրել համոզեցին, մեր նիւթական ֆիսան յիշեցնելով զոր կը ընդունու փառքն ունեցանք առաջին անգամ մեր սիրելի կրթական խորհրդականին վստահութեամբն զերծանողներն: Մեր յաղթանակ նախ տարած ենք, քանի որ բոլոր Հայոց հասկցուցած ենք երեսօնեան վարչութեան անգորդարելի յոռութիւններ:

ՆԱՄՍԱ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 27 ապրիլի

սէսը պատրիարքութիւնն հեռի պահելու համար: Անտարակոյս այն: Միկնեք այս հակապատական պատասխանները: Քսան և հինգ տարիէ ի վեր շատ պատրիարքներ եկած են ի կուսակալու: Պարագայներու բերանով, կամ ճշմարիտ արժանիքով, տեղը չէ այդ քննել իման, անոնց ոչ մէկը այնչափ ժողովրդականութիւն ունեցեր է որչափ Ներսէսը: Կա անհրաժեշտ ճշմարտութիւն մըն է: Ժողովրդականութիւնը գործողի մը ամենամեծ բարոյական ոյժն է, և այն է ճիշդ, որ քաղաքական ստոր շահերու հետ, մեր գործիչներէն ունեց անհամար ժողովի եղած էր, մանաւանդ երբ տարիէ ի վեր: Ոյժ տեսնող անձը որ և է մարդի ստիպմունքներու առաջ չի դիմանիր, ոչ զոր կը շողորթի: Եւ վարչարար ստոր անոր համար երեսնալու նպատակաւ: Նա կը շարունակէ իր ճանապարհը ինչպէս որ իր համոզմունքները կառաջնորդեն իրեն, ինչպէս որ իր խիղճը կը թելադրէ: Ճիշդ այսպէս վարչութեան Ներսէս պատրիարքն ալ և այս պատճառաւ է որ փոքրաթիւ, բայց զօրեղ խումբ մը ձեռաց տակէն կաշխատի վեց ամիսէ ի վեր որ զայն պատրիարքարանէն հեռու պահէ միշտ, և ազատ ու համարձակ գործէ տեղութիւնէն ստացած հրահանգներուն համեմատ: Ազգային գործերու զբաղելու մասին անհոգ են ընդհանրապէս այստեղի զգաստ և լրջամիտ հայերն: Այս պախարակելի ձեռնպահութիւնն օգուտ չազատ են միշտ քանի մը անձինք, հալիւ 15 կամ 20 հոգի, որք իրենց խելահաս տարիքն ի վեր շարունակ ազգային պաշտօնին մը վրա զբաղուած են: Անոնց դուրսը կը յաջողիս պատրիարքարանէն դուրս հանել, ուղեւորին ներս կը մնայ: Գուռնէն եթէ վաճառ, պատուհանէն ներս կը մտնեն: Ասոնք միշտ առաջին պլանի վրայ փայլել կ'ուզեն: Եթէ երեսնալու առիթները պակաս իրենց քիչ մը առնեն՝ դպրոց մը կերթան ճառ մը կը խօսին, կամ թաղային կուի մը կը յարուցանեն զաղուի, որ վերջը կուտղենք հաշտեցնելու փառքին արժանանան: Զարմանալով չէ ուրեմն եթէ այժմեան վարչութիւնն ալ այս տեսակ մարդերէ բաղկացած է, նոյնչափ բնական է նաեւ որ Ներսէսի ժողովրդականութիւնն, անոր անխել և անվերջ վարչութեան ներքին իմաստն այդ մարդիկը և առաջին առիթին օգուտ չաղելով զայն հեռացնել աշխատին: Ուրեմն եթէ հակապատրիարքական գաղափարի կուսակցութիւն մը կայ այսօր, այս ալ ազգային վարչութիւնը կազմող անձներէ բաղկացած է, քանի մը արքանականներ աշխույժութեամբ թշնամին բերդին մէջն է: Այս անձինքը յիմար մարդիկ չեն սակայն: Ընդհակառակը: Անոնք գիտեն թէ Ներսէսի նման անձնատրութեան մը դէմ չեն կարող յայտնապէս և անպատիւ թշնամութիւն ընել: Բայց գիտեն միանգամայն թէ մարդիկ ընդհանրապէս, և մեր ազգը ի մասնաւորի, շատ կը մոռանան իրենց բարիք ընդունելը: Այս մոռացումը առաջին քայլն է դէպի ապրիտաւորութիւն և ապա դէպի թշնամութիւն: Հարկ էր ուրեմն որ վարչութիւնը այնպէս վարուէր, որ ժողովուրդը նախ մոռանար իրեն անջան սիրելի հովիւը և այդ գործն ալ ժամանակը կարող էր ընել: Վեց ամիս շարունակ թոյլ տալիս ուրեմն, որ պատրիարքը հրաժարման հարցը անույժ մնայ, հաղաք ու մէկ պատրուակներ հարցնեն, օրագիրները խաբեցին, վեց ամիս շարունակ ազգային ժողով չի գումարեցին որ մի գուցէ հետաքրքիր երեսօնեան մը զինուորին ելնէ և հարցնէ թէ «Այն չէ ա մա, Ներսէսը ինչ եղաւ»: Եւ որպէս զի դառ մը անհամբերները լուսնին լուր տարածեցին ամեն կողմ որ պատրիարքին ինն խնդրոց վրայ Կրան հետ բանակցութեան մէջ են, իբր թէ Կրան հոգը ըլլաւ այն խնդիրներուն լուծում մը տալ շուտով: Վերջապէս Միւրախ կաթողիկոսի երկրորդական խնդրոյն չափազանց կարեւորութիւն մը տուին և ստոր համար Գուռն երթալ զալ ձեռնուցին, մինչև պատրիարքը իր հրաժարման պատճառներուն կարգը չէր դատած անգամ այնպիսի եկեղեցականի մը խնդիր, զոր հակառակ ամեն ստացուած բերքալիւնութեան եկեղեցական ժողով մը կարող էր տալ վարչական մէջ ոչնչացնել իր մանուշակագոյն վեղարով մէկ տեղ: Այժմ այդ խնդիրը այս կերպ միջոցներով վեց ամիս ժամանակ շահելէ վերջը՝ արժան կը դատուի իր ամուլ պաշտօնավարութեան հաշիւը ալ ազգին և ժողով գումարել կը խոստանայ քիչ օրէն... եթէ Աստուած կամենայ: Եւ, ազգային ժողովն ալ կրնան գումարել: Վեց ամիսուան մէջ

շատերը արդէն մոռցան զՆերսէսը, բաւական տարածեցին այն խօսքը ժողովրդեան մէջ որ Պատրիարքը յանցանք գործեց Հայկական հարցը յարուցանելով և վնաս հասուց մեզ ազգը թիւրք կառավարութեան հետ թշնամացնելով: Այս է ահա իրանց ճշգրիտ վիճակը և այս պատճառաւ է որ այստեղի «Հայրենիք» լրագիրը վերջապէս համբերութիւնը հատած՝ սկսած է անխել մերկայանել վարչութեան արարքները, փոխադի ենթարկելով իր գոյութիւնն իսկ: Այս է ճշմարտութիւնը մեր այժմեան անմեղել կացութեան վրայ և ուր որ կը տքնի աչքապէս իրողութիւնը ներկայացնել այստեղի կամ աչքադի լրագրաց մէջ, նա լոկ արբանեակն է այդ խնդրակին, նա ստոր դաւաճան մըն է որ քողարկեալ փառսերով կուզէ Ներսէսի դարան գործել: Զառաջիկայ նիստին մէջ եթէ ազգային ժողովը կրկին պահել ուզէ պատրիարքն իր գահին վրայ՝ յիշեալ էջէնդիները յայտնապէս անոր դէմ մաքառած չըլլալուն՝ այդ արդիւնքն բոլորովին իրենց ճարտարամտութեանը պիտի վերադրեն: Իսկ եթէ հակառակ ամեն հաւանականութեանց, ընդունի անոր վերջնական հրաժարականը՝ իրենք ձեռքերնին պիտի լուան և երեսփոխանները պիտի կրնն ընդհանրութեան յարձակումները: Երկու կողմէն ալ խաղերնին լաւ է: Գծուար է մեզ գիտնալ թէ այս հակառակ պարագայներու մէջ ի՞նչ մտադիր է ընել Ներսէսը: Իր հրաժարման անդառնալի ըլլալը տակաւին կը հաւատալ կրնան, և լաւ է իրեն համար որ այդպէս ըլլալ, վստահ զի եթէ իր գահին վրայ կրկին թաղմելու թոյլութիւնը ունենայ պիտի սկսեն աւելի խուլ և աւելի ազատ կերպով արտատարել զայն: Ներսէսն այն առեւ կամ անոնց խորհուրդներուն անսալով ծուռ քաղաքականութեան մը պիտի հետեւի, կամ պիտի հրաժարի կրկին: Լաւագոյն է ուրեմն որ նա բոլորովին հեռանայ այժմէն, պատրիարքական բոլոր պատուով, պահելով ամեն ողջամիտներու յարգանքն և համակրութիւնը, բան մնալով վստադի ենթարկել իր անարատ համբաւը և կամ կրկին հրաժարման մը ծաղի իր վրայ հրաւիրէ: Կոյ սակայն միջոց մը Ներսէսի համար դարձեալ պատրիարք մնալու և ազգին ծառայելու համար: Այն է շարունակել իր պաշտօնը անհրաժեշտ պայմաններու ներքե: Նա ալ չէ կարող գործել այժմեան վարչութեան անգամներու հետ, վստահ զի ունեց սիրուն ու հոգին ամենին լաւ նա կը ճանաչէ: Պէտք է որ պահանջէ անոնց ազգային գործերն բոլորովին հեռանալու: Պէտք է նաեւ որ ազգային ժողովը քիչ մը ժամանակ յիմար և քննող հարցաւորութիւններ չը ներք բնաւ ազգին քաղաքական գործոց նկատմամբ: Պէտք է միանգամայն որ Պատրիարքարանի գրասենյակն վիճակին լաւանալը որ և իցէ կերպով սպասուին իրեն, որպէս զի կարողանայ գործել՝ գործունէութեան գլխաւոր դէմքը ի ձեռքն ունենալով: Այս պարզ դիտատարութիւն մըն է որ կառաւարկները: Անշուշտ: Թող ցուցնեն մեզ եթէ ուրիշ միջոց մը գիտեն ազգը այս ամենավատեմար վիճակէն ազատելու համար: Այս կերպ կամ այն կերպ, եթէ Ներսէսը չի դաւաճայ նորին իր պաշտօնավարութեան, մենք պիտի ջալկնք մտածելով միայն որ ազգը այսպիսի անձին մը դեռ արժանի չէ եղեր: Թող ազգի նա սակայն, վստահ զի նա ձեռ և մեր ընդհանուր սէրը, համարումը և երախտագիտութիւնը շահած է արդէն և գուցէ, ո գիտէ, նա օր մը աւելի բարձր պաշտօնի կուտղելով, դուք ալ մեզ հետ միասին կը վախճէ իր աւելի արդիւնաւոր ծառայութիւնները: Մ. Վ.

ԵՐԱՍՏԻՆ ԼՈՒԻՍԻՐ

— Լրագիրները հաղորդում են, որ Աւստրիայում արգելված են հակահրեական ժողովներ: Ասում են որ այդ կարգադրութիւնը առաջ է եկել աւստրիական կայսր Ֆրանց-Յոսեփի, միւնխտը ճառֆէի ներկայութեամբ արտասանած հետեւեալ նշանաւոր խօսքերից: «Ես չեմ թոյլ տայ որ իմ պետութեան մէջ հրեաները հալածվեն: Հրեաները մնացած հպատակների պէս լաւ հպատակներ են և ազգային քաղաքացիներ են: Ես կրկնում եմ, ես չեմ թոյլ տայ որ իմ պետութեան մէջ հրեաները հալածվեն:»

